ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.02.01-9

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 31.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Ա. Դովլաթյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում «Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 133 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը, ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) ունեցող թվով 5 ուսանողներին, որից՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող թվով 3 ուսանողների և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների թվով 2 ուսանողների, որի դիմաց Պատվիրատունը պարտավորվում է ուսանողական նպաստի տրամադրման ձևով իրականացնել ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) :

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 50 547 500 (հիսուն միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է 50 455 500 (հիսուն միլիոն չորս հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամև սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցումը՝ 32 000 (երեսուներկու հազար) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց Պատվիրատունը պարտավորվում է ուսանողական նպաստի տրամադրման ձևով իրականացնել ուսման վճարի փոխտրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3. Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն պայմանագիրը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	Ք.Եղեգնաձոր, Սպանդարյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900011005460	Հ/Հ 900358000322
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
Վ. Գասպարյան	Ա. Դովլաթյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ